

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյուրյն խմբագրության մեջ:

Օտարապետացիք լինում են ուղղակի

Դիմումները. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաօտեման 10—2 ժամ

(հացի կիրակի եւ տոն օրերից)

Յայտարարումները ընդունվում են ամեն լիզուով:

Յայտարարումները ընդունվում են ամեն լիզուով:

Խմբագրատունը բաց է առաօտեման 10—2 ժամ

ՄՇԱԿ ԼՐԱԳԻՐ ԲԱՆԴԱԿԱՆՆԵՐ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆՆԵՐ

1881 թ. ի ն

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Իր հրատարակվող նոր գրքերով և նոր պարբերականներով ՄՇԱԿ ՕՐ (բացի տոն և տոնիկից) հետևյալ օրերից:
I. Տեղեկական կարգադրություններ, II. Առաջնորդող յոգևածներ, III. Ներքին տեսություններ, IV. Արտաքին տեսություններ, V. Խառն լուրեր, VI. Հեռագրեր, VII. Ֆելիետոններ և Բանասիրական, VIII. Յայտարարություններ:
I. ՄԱՐԿԻ ԳԻՆԵՐ, տարեկան 10 ռուբլ, կես տարվանը 6 ռ., հինգ ամս. 5 ռ., չորս ամս. 4 ռ., երեք ամս. 3 ռ., երկու ամս. 2 ռ. և մի ամս. 1 ռուբլ:
Գրվել կարելի է խմբագրության մեջ հետևյալ հասցեով. Тифлисъ, редакция «Мшак».
Խմբագրիչ-հրատարակիչ ԳԻՐԻՔՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Ն ե թ թ ի ն տ և ո լ թ ի ն: Նամակ Ախալցա-
լայից: Ներքին լուրեր: Արտաքին տեսու-
թիւն: Գաղափարական տեսություններ: Արտաքին
լուրեր: Պատերազմի լուրեր: Վաղարշապատի
հեռագրեր: Յայտարարություններ: Բանաս-
իրական: Նամակ Թիֆլիսից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՍԼԻՔԱՆԻՑ

Գեղարվեստի 20-ին 80

Վաղարշ արդեն խոսում են կուրբ բանավո-
ւման: Բանավորանք արդեն վարձած է, կա՛հ կա-
րասիրի համար 300 ռուբլի փող ուղարկել են

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՖԻՆԻՍԻՑ

Կ. Պոլիս, 15 յունվար 81

Երկաթե ձեռք մը կը ծանրանայ Կ. Պոլսոյ
մամուլին վրայ. յոյն, ֆրանսերէն թերթեր կը
գառապարտուին, «Մասիս» զոր կըլլայ իր երե-
տասարդ խմբագիրներէն միոյն յանդիմանումը
որ արի բողոք մը կարճէր ընդդէմ քրդական
բարբարոսութեանց. 27 տարուան մէջ առաջին
անգամ ըլլալով ամիս մը լուսթեան դատապար-
տուելէ յետոյ՝ ասեմէ մը ի վեր սկսաւ վերս-
տին հրատարակուիլ. մինչև իսկ Անդրկովկասի
կապոյտ տեսակիին, որ Հայաստանի վիճակի վը-
րայ պաշտոնական տեղեկութիւններ կը պարու-
նակէր, թարգմանութիւնը կամ արտասուածը
տեղական թերթերու մէջ արգելուեցաւ: Բայց
ամէն լեզուէ թերթերն կատարեալ ազատու-
թեամբ հրատարակեցին այն փառաւոր հանդէս-
ներն, որք ի Վասիկան տեղի ունեցան դեր. Հա-
ստին կարգինստեան բարձրանալուն առթիւ:
Առաջին անգամն էր որ հայ մը կարծանաւար
Հեռագրէն եկեղեցոյ իշխաններէն մին ըլլալ և ս.
Պատրիարքին առիթ համարեց յայտարարել թէ
ինչ մեծ գիտութիւն ունի արեւելեան քրիստոնէից
վրայ:—Ինչ որ ալ ըլլան քահանայապետին և
կարդինալին փոխադարձ սրտաբուլիս ճառերն,
Հաստին բարձրանալը պարտութիւն մ'է. Վա-
սիկան հակեցաւ թէ Հաստին անձնականութիւ-
նը վերցնելով միայն, հուսկմական հայոց մէջ
հերձուածը կրնայ վերջանալ: Գեր. Հաստն ամեն
ջանք ըրաւ որ կարդինալ ու պատրիարք միմե-
կանք ըլլայ, բայց անօգուտ. քիչ օրէն յաջոր-

Թիֆլիս. 150 ռուբլ նշանակեալ է ընթերցարա-
նի համար: Անդամներ թիւր համար է մինչև
50-ի և մինչև անգամ անցեալ շաբաթները ժո-
ղով կար ստար շին ան և ր ընտրելու համար:
Ընտրուեցան 9 հոգի ստար շին և 5 հոգի կան-
դիլաններ, գլխաւորապէս ծառայողներէ: Այս-
քի ստար շիններն ընտրութեան ժամանակամի-
ջոյն մի փոքրիկ էպիգոլ պատահեց, որ հար-
կաւոր եմ համարում տեղական բնակչութեանց
իւր և կաւորի ստի կայ ի համար մէջ բե-
րէ: Առաջին անգամ ընտրութեան ստար շինները
բողոքեցանք էլ ծառայողներ լինելով, տեղացի-
ներն մէջ մի ախալայ նախանձ ծագեց իրանց
պատուաւորութիւնը վերաբերեալ տեսնելով
ուստի կամեցան անպատճառ ապօրինի համարել
ընտրութիւնները և պահանջել նոր ընտրութիւն:
Այս երկրորդ անգամը ընտրութեան երեք բուն

ըր կընտրուի: Հաստիններ և հակահաստիններ
հաշտութեան պատրաստութիւններն կը տեսնեն,
այսուհետեւ այդ երկու անունները միայն պատ-
մութեան պիտի վերաբերին: Բայց շաբաթ մը
բողոքական հայոց մէջ կը տեսնուի. ամերիկացի
միսիօնարք և բողոքական հայ ժողովուրդը կա-
տարեալ ներդաշնակութեամբ չեն ընթանար:
Հայ-բողոքականը կը հարցնեն թէ Բնչու իրենց
քարոզչներն օտարազգիներ պէտք է ըլլան. հե-
տեալքը կը պահանջեն որ հայ հօտին հայ հովիւ
ըլլայ և որչափ հնար է, մերձեանս աղային նախ-
նական եկեղեցոյ արարողութեանց: Նիւ-Եօքը,
Լանդա, Բերլին անդադար թղթակցութիւնը
կըլլան, բայց գաղտնապահութիւնը կատարեալ է:

Արդեօք մենք ալ պատրիարքական հարցով մը
պիտի դադարէք: Երկուր ասեմէ է, որ Ներսէս սրբ-
բաղանք տապալելու ջանքեր կըլլան, բայց զիս
վար առեւելու համար այսօր անգուտ կը համա-
րեն դիմել այն միջոցներուն, որ քանի մը տարի
առաջ ի գործ դրուեցան խրիմանը կործանելու
և որոյ համար հուսկաւոր վանք մը 22,000
րուբլի կը վառեն, ինչպէս պարծեցաւ նորա
գլուխ-գործոյ և եպիսկոպոսներէն մին: Ներսէսի
հակառակորդը կը ջանան, որ խորհրդարանական
միջոցներով զիս տկարացնեն, այնպէս որ ինք-
նին հրաժարական տայ: Ներսէս սրբազանի հրա-
ժարականը փափագողները երեք դասի կը բաժ-
նուին: 1) Անոնք որ կը կարծեն թէ Ներսէսի
օրով ներքին բարեկարգութիւններն անխնամ մը-
նայով, արտաքին յարաբերութիւններ միայն ու-
ղարկութեան առնուած են: Այս թերութիւնը
պատրիարքի վերադրել արդարութիւն չէ. ծանր
խնդիրներ հիւանդ ու տառապեալ Ներսէսի բո-
լոր վարկիւնները զբաւեցին. ով արգելք եղաւ
աղային վարկութեան ներքին խնդրոց կարգա-
դրութեամբը զբաղել, սակայն արդի վարչու-
թիւնը այս մասին ազգը գոհացնելու նշաններ
ցոյց տալ սկսած է: 2) Նոքա որք կը խորհին թէ
Գրան հետ պէտք է բողոքովին հաշտուինք և թէ

քաղաքացիք՝ Ստեփան Օհանջանեանց, Հայրա-
պետ Գրիգորեանց և Մարգարեանց: Տեղացի պա-
տուելի քաղաքացիներէն մէկը, Անտոն Գանասո-
վը, նմանապէս իրան վերաբերեալ համարելով
նորանց արգելք, որ չեն ուղարկել հրախրա-
թութիւն, թէ նրանց որ ինքն ևս ինչու ստար շի-
նա ընտրեալ չէ, յետ պահանջեց իր տուած 20
րուբլ դրամը և մի և նոյն ժամանակ յայտնեց,
որ ինքն ալ ևս անգամ լինելու չէ: Այսուհետեւ
գամները տեսնելով մի պատուաւոր անդամից
զրկվելը, շտապեցին մի նոր ժողով կազմել և
քննութեան առարկայն չինել վերոյիշեալ դէպ-
քը: Ժողովի մէջ յայտնուեցաւ, որ թէ և ծառայն
տարել է թուղթը, բայց իրան, Անտոն Գանասո-
վին տանը չը գտնուէ պատճառաւ մոռացել է
տուածը: Գրա մօտ թողնելու: Ահա այս չնչին
պատճառաւ յարուցեալ անբարեկամութիւնը
քիչ մնաց, որ երեմիական կարգար դեռ ևս չը
ծնված կըլլէր գլխին: Անդամները բաժանուեցան
պարտականքի. մի մասը կամենում էր յետ դար-
ձնել նրան իրան փողը և այնուհետեւ զրկել նո-
րան անդամակցութիւնից, իսկ միւս մասը կա-
մենում էր առանձին մարդ ուղարկելով խնդրել
անդամակցութեան պատիւը իրան վերապահել:
Վերջը մի բարեկամ անձն իր կողմից գնալով
վերոյիշեալ պարտի մօտ, խնդրեց ներկայանալ
ժողովին և բացատրութիւն տալ: Այս փոքրիկ
անցքը վերջացաւ նրանով, որ պ. Գանասովը
դարձեալ մնաց կուրբ անդամ: Թէ ինչ նշանա-
կութեան համար, մենք թողնում ենք ժամանա-
կին պատասխանելու, մեր կողմից ցանկանալով
միայն այն, որ կուրբ ուղիղ ծառայէ իր իսկա-
կան նպատակներին, այն է լինել ժողովարան
իրանց առօրեայ աշխատութիւններից յետոյ օգ-
տակար և դեղեցիկ կերպով ժամանակ անցկաց-
նել ցանկացողներին համար, այլ և չը դառնալ

լով թուղթ խաղացողներ հատարակաց տուն:
Ի դէպս է յիշել մի սկանդալ մասին, որ
պատահեցաւ այս օրերումս հայոց ուսումնարանի
դահլիճում: Տեղիս երկուստարները և հայոց ու-
սումնարանների ուսուցիչները ցանկալով ծնը-
դեան և ջրօրհնաց տոներին մի ներկայացումն
տալ յօգուտ ուսումնարանի, հաւաքվում են
տղայոց ուսումնարանի դահլիճը ընդկողնաներ
անելու համար: Մի գեղեցիկ երեկոյ, երբ հա-
ւաքված սկսում են կրկնութիւնները, մի սար-
սափելի փաթիլի բարձրանում է մի թատրո-
նասէր խմբի մէջ մէկ կողմից տեղական վաճա-
ռականների պրիկաչները, միւս կողմից ու-
սուցիչները թողնուած են օրը իրանց տուր ու
գմբջով և զարհուրելի ճիշ ու աղաղակնե-
րով, կուրբ այն աստիճան աստիճանում է որ
ոստիկանութիւնը ստիպված է լինում դռնով
բաժանել միմեանցից մեր չափից դուրս ազատա-
սէր պարտներին: Յաւախն այս է որ այդպիսի
դէպքեր համարեա ամեն անգամ, երբ կամե-
նում են ներկայացումն տալ, պատահում են
մեր պատուելի դերասանների մէջ: Եւ խորհուրդ
կը տայի այդ տեսակ խռովարար երկուստարնե-
րին բողոքովին հանգիստ թողնել թատրոնը, վայր
չը գցել նրա պատիւը հառաքակութեան աչքի ա-
ռաջ, զբաղվել իրանց գործերով և չը դարձնել
թատրոնը ժամանակ անցկացնելու տեղի պարա-
պորդների համար և մանր, կեղտոտ, ցած կրքերի
ու խնդրիների ապարէզ: Եւ ինչ ներկայա-
ցումներ կարելի է սպասել այնպիսի ինքնակոչ
դերասաններից, որոնք իրանց գաղափար իսկ
չունեն թատրոնի և նրա նշանակութեան մասին:

Քուէարկեալ 500 ոսկին կըլլէր չէ տրուած, ինչ
է պատճառ: Պատրիարքը այս հարցումը իրեն
դէմ յարձակում մը նկատեց և բաւական ներդա-
ցաւ, և աղէկ չեղաւ. սկզբունքներու վերաբե-
րեալ գործերու մէջ խորհրդարանական վիճաբա-
նութեանց մէջ մենք արեւելիքս դեռ չը ստիկե-
ցանք անխուով մնալ:

Տեսնուեցան պաշտոնական պէտք եղած բացառ-
ութիւններն տուաւ ժողովին՝ յայտարարելով
միանգամայն թէ այսուհետեւ ճիշ պիտի գործա-
դրուին ամեն քուէարկեալ վարկեր: Պատրիար-
քանի դրամական վիճակը լաւ չէ. ժողովը ու-
րոշեց որ ամեն երեք ամիս վարչութիւնը իրեն
հաղորդէ անդուլի վիճակը, որպէս զի այդ վի-
ճակը բարեւեալութիւն միջոցներ ձեռք առնուն: Ելե-
մտական վիճակի բարեւոյն հետ ուրիշ շատ
խնդիրներ կան, որք լուրջ ուղարկութեան առարկայ
պէտք է ըլլան. առաջինը կրթութեան խնդիրն է.
Կրթութեան տնօրէնը Կ. Պոլսոյ հայոց դպրոցներու
ընդհանուր տեսուչ կարգեց պ. Հ. Նիկիթեան. այդ
դպրոցները ընտրել սերունդ մը հասցնելու այն-
քան յայտնար են և մեծ մասամբ այսօր անխնամ
են: Երկրորդ խնդիրը դատական խնդիրն է. կառ-
կի, ամուսնութեանց և ուրիշ տեսակ տեսակ դա-
տեր պատրիարքարանի իրաւասութեան ներքեւ են,
բայց օրինաց գիրք մը չը կայ, որ դատաւորնե-
րուն ուղղեցոյց ըլլայ. աւանդութիւնը, Աստուա-
ծաշունչ և գլխաւորապէս ներշնչում, ահա մեր
օրինադիրը: Դատաստանական տնօրէնը այս կա-
րեւոր պէտքը լրացնելու ետեւ է: Բայց փութալու
պէտք կայ, նորանոր խնդիրներ կը ծագին:
Այժմ պատրիարքարանը մամուլի դատաստան-
ներ ալ սկսած է տեսնել: «Մ ա մ ու լ» թերթը
պ. Փափագեանի և «Ո յ ա» թերթի դէմ յարձա-
կումներ կընէ և ասոնք պատրիարքարան կը բողո-
քեն. թիւրք թերթերը կը դայրանան, պետու-
թեան մէջ պետութեան կը գոչեն. միթէն տպագ-
րական խնդիրներն ալ կրօնական հարցեր են,
որ Ներսէսի իրաւասութեան ներքեւ ըլլան կը-

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՆԵՐ

Այսօր «Մշակը» ունի ուղիղ 900 բաժանորդ, բացի հատով ծախված համարների, որոնք այս տարի էլ աւելի շատ են ծախվում Թիֆլիսում: Ուրեմն հատով ծախվածների հետ մենք ունենք այս բազմաթիվ, դեռ յոնվար ամիսը չը լրացած 960 բաժանորդ, այն ինչ անցեալ տարվայ վերջը մենք ունէինք, հատով ծախվածների հետ միասին 1100, ուրեմն մինչև անցեալ տարվայ բաժանորդների թիւ հասնելը մեզ պակաս է միայն 140 հատ բաժանորդ: Իսկ ամբողջ տարվայ ընթացքում ի հարկէ 140 բաժանորդից շատ կը հաւաքվի:

Երկուշաբթի, յոնվարի 26-ին Թիֆլիսի թատրոնական մշտական հայոց խումբը ներկայացրեց Ստանդանդի «Էլի մէկ դո՛» կոմեդիան, որ հեղինակը փոփոխեց և հինգ գործողութիւնների պիէսա շինեց: Փոփոխված «Էլի մէկ դո՛» գերուածքը աւելի անաչոյ է թույլ է քան թէ առաջ: Իրա մասին մենք մանրամասնաբար կը խօսենք մեր ընթերցողների հետ մեր հետեւեալ համարներից մինում:

Թիֆլիսի դուման իր վերջին նիստի մէջ վճռեց ձայների բազմութեամբ քննութիւն նշանակել քաղաքային վարչութեան կառայի վրա:

ՅԱՐԻՑԻՆԻՑ հեռագրով միջ տեղեկացում են որ այդ քաղաքի հայերը ուղարկեցին մեր խումբագրութեան անունով 600 ռուբլ. Կ. Պօլսի Միացեալ Ընկերութեան օգտին:

Մեզ հաղորդում են, որ յոնվարի 21-ին աւագանիներ կոորդինացիոն Հաւաքարի էմիսիոնայից եկիղեցին, տանելով մինչև 230 ռուբլ. անօթեղէններ, իսկ յոնվարի 25-ին Ս. Կարապետի եկիղեցին կոորդինացիոն և տարան արծաթեայ իրեղէններ: Հաւաքարի թաղապա՛ն ուսմիականները լաւ կանէին, որ փոխանակ լայն և լուսաւոր փողոցների վրա հակելու, հակէին նեղ և մութ փողոցներում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Յրանխական պատգամաւորների ժողովի մէջ յոնվարի 15-ին շարունակվում էին

սեն: Բայց մերիններն կը պատասխանեն, թէ բոլորովին ազգային ընտանեկան հարցեր են, որոց համար օտարաց միջամտութեանը պէտք չունի: Այս պատասխանների բաւական հետաքրքրական պիտի ըլլան. ատենանք կանոնաւոր է: զատառատական տնօրէն, զատաւորք, ընդհանուր զատախաղ (բօքսը, ռեօն ժենըրայ), փատտաբանք, ոչինչ պակաս է. միայն նիւթական պատիժ սահմանելը դժուար է: Ոչինչ նուազ կարելու է ուրիշ զատական խնդիր մը, այն է Տիգրանեան Սիլախի եպիսկոպոսի (հրաշագործ մահահանանայ) խնդիրը: Այս օրերս թերթերը հրատարակեցին, թէ այդ եպիսկոպոսը հրատարակութիւն մը ըրեր է, զոր կառավարութիւնը իրը յեղափոխական նկատելով, հեղինակը բանտ նետեր է և պարտաբարարանէն ալ պահանջեր է, որ կարգերը առնուն, որպէս զի իրը պարզ աշխարհական մը պատժուի: Զարմացանք, թէ այդ հրաշագործը կրնայ լուրջ բան մը զրել, վասն զի իր գրածները ամենեւեմ են. այժմ խաբարները, թէ Բ. Գուռն ալ տեսեր է, որ այս գերուածները յիմարութիւններ են, և մարդու օձիքը ձգեր է: Սակայն նկատողութեան արժանի կէտ մը կայ. եկեղեցականներն պարտաբարանի իրաւասութեան ներքե են, ուստի քիչ շատ ազատ կերպով կրնան գործել. եթէ Բ. Գուռն ի հարկին անոնց եկեղեցականութիւնը մերկացնել տաւ, պարզ աշխարհական նկատէ, ուր կը մնայ այդ ազատութիւնը. կերակր թէ այս վարպետութիւնը մեր էֆենդիները սորվեցուցած են տաճկաց. վարչութիւնը բաւական մեծ դժուարութեան մէջ պիտի գտնուի: Արդէն վարչութիւնը ուրիշ կնճաղաց հարցեր ալ ունի, որոց պարագիծին է Ստյ. կաթողիկոսական խնդիրը: Մօտ երկու ամիս է, որ Լիւիլիոյ Սիլախի կաթողիկոսը Կ. Պօլսի է թեմական խնդրոց կարգադրութեան համար: Պարտաբարանը կուզէ, որ էջ միմանայ Ստյ. մէջ բարեկամական յարաբերութիւններ հաստատուին. կրօնային ատենանք

վիճաբանութիւնները տպագրական նոր օրինագծի մասին: Ժողովի անդամ Ֆ. Ե. Ե. առաջարկեց աւելացնել օրինագծին հետեւեալը. իսկպէս տպագրական յանցանք չը կայ: Տպագրութեան կամ հրատարակական այլ միջոցներով յանցանք գործողները պէտք է պատասխանատու լինեն ընդհանուր օրէնսդրութեան առաջ: Սի այլ պատգամաւոր Տ. Ե. Ե. նկատեց հետեւեալը. ի նկատի առնելով այն ազատութիւնը, որ այժմ վայելում է մամուլը, առաջարկված օրինակից բնականապէս յետադիմական է երևում: Որքանագիծը կազմող մասնաժողովը սգուտ է քաջիկ կայսերութեան և Լուի-Ֆիլիպպի օրէնսդրութիւններից: Ոչ ոքի մի պատժէք, այդ գործը թողէք հասարակական կարծիքին, որ կը կարողանայ պատժել անազնիւ մամուլին:

Իրանից յետոյ Ֆիլիպպի առաջարկութիւնը յանձնվեցաւ մասնաժողովի քննութեանը:

Իրանից երևում է, որ պատգամաւորների ժողովը չը բաւականացաւ օրինագծի առանձին մասերը քննելով, այլ անցաւ հետեւեալ ընդհանուր հարցի քննութեանը. սրբեօք կա՞ն այնպիսի առանձնական յանցանքներ, որոնց կարող է գործել մամուլը, թէ տպագրութեան միջոցով գործած յանցանքները պէտք է ենթարկվին ընդհանուր օրէնքներին: Այս ընդհանուր հարցից, որ զրել է Ֆիլիպպի իր առաջարկութեամբ կախված է ամբողջ օրինագծի վիճակը: Եթէ Ֆիլիպպի առաջարկութիւնը կընդունվի, նոր օրինագիծը աւելորդ կը լինի և մամուլը կենթարկվի պատասխանատուութեանը ընդհանուր օրէնքների առաջ և այգլիսով նա քաղաքացիութեան իրաւունք կը սրտանայ:

Օրինագիծը կազմող մասնաժողովը և միւսատրութիւնը կարծում են, որ վերջին դէպքում մամուլի դուրսութիւնը կը վատանայ, բայց մինչև այժմ դրա պատճառները չեն մեկնված:

Աւստրո-Ռուսագրայից ստացված տեղե-

կաթողիկոսին վեց պաշտաներ կառաւարկէ, զորոնք եթէ ընդունի՝ կրնայ այն ատեն պատառել Կ. Պօլսոյ եկեղեցիներում մէջ. կաթողիկոսը այդ առաջարկութիւնները կը մերժէ: Զարմանալի է, որ թիւրք թերթերն ալ մեր գուռ կրօնական— ազգային հարցերու կուզեն միջամտել. «Ա. Ե. Ե.» կը յարձիք պատրիարքի դէմ ընելով, թէ Ներսէս սրբազան կը բռնանայ կաթողիկոսի վրայ, որպէս զի Ռուսիա բնակող հոգեւոր զլիտայ մը հպատակի և անոր անունը յիշէ պատարագի ատեն: Տաճիկ թերթը Միկայիլ կաթողիկոսի պաշտպանութիւնը կընէ. պարտաբարանի պահանջները կառավարութեան շահուց հակառակ կը գտնէ և Բ. Գրան ուղարկութիւնը կը հրաւիրէ: Եթէ ներքին խառնակիչներ չը գտնուին, Մահմէդի աշակերտները չը պիտի յանգանին հայ կաթողիկոս մը իրենց հովանոցի ներքե առնելու փափագներ ունենալ, փափագներ, որք մեր կարծածէն աւելի չար հետեւեցներ կրնան ունենալ: Մեծ խնդիր մայ, որ կրօնական ժողովը և կաթողիկոսի միջև բանակցութեանց նիւթ է, կաթողիկոսի վեղարի գոյնն է: Կաթողիկոսը մանուշակագոյն վեղար կը գործածէ. կրօնական ժողովը կը պահանջէ, որ սե վեղար գործածէ իւր մուկուլեթեան նշան. կաթողիկոսը ոչ կընէ, կրօնականներն կը պնդեն. իսկ մենք կը թողնուք մուկուլեթեան պաշտպան ու հակառակորդ սուրբ հայերեն, որոց ուսուց համար վեղարի մը գոյնը շատ և շատ աւելի կարեւոր է. քան թէ հայրենեաց վերականգնութեան հարցը և զբաղինք: Հայաստանի վերաբերեալ խնդիրներով:

Ան օրը որ Արարատեան ընկերութիւնը Հայաստանի մէջ գործելու առաջին նշանը տուաւ, Հայաստանի բարոյական և նիւթական վիճակը թեմայի էր Կ. Պօլսոյ հայոց. Պ. Գորթուգալեան առաջինը եղաւ որ ի վառագործական հիմնելով Արարատեան առաջին նախակրթարանը հայրենեաց վիճակը սկսած ծանօթացնել մեզ: Սի-

կութիւններից երևում է, որ Աւստրիայի գերմանական նահանգներում անդադար չի նուաճում գիւղացիների ժողովները, որոնց պատգամաւորները մի քանի անգամ ներկայացան Աւստրիական կայսրին: Այդ ժողովների և պատգամաւորութիւնների կազմվելու պատճառն այն է, որ կառավարութիւնը մտադիր է վերաքննել կայսրական հարկերի օրէնքները, որոնցից Աւստրիայի գիւղացիները չափազանց դանդաղում են:

Չը նայելով, որ Աւստրիական պատմութիւնը կուսակցութիւնը թշնամի է այժմեան կառավարութեանը, բայց այս հարցի մէջ նա անկարող է ընդգրկմադրել ճառքէի միւս հատութեանը, որովհետեւ հակառակ դէպքում այդ կուսակցութեան անդամները կը զայրացնեն իրանց գիւղացի ընտրողներին:

Ընթերցողներին յայտնի է, որ թէ Պարսիկ և թէ իրանդական կայսրածական միութեան առաջնորդները և անդամները զատառատներ էին ենթարկված, որը նորեւրում վերջացաւ. իրանդացիների կատարեալ յաղթութեամբ: Ընթերցող էին 12 երդվեալ դատաւորներ, որոնք պէտք է միաձայն վճիռ կայացնէին: Չը նայելով, որ նրանք երկու ժամանակ խորհրդակցում էին, այնու ամենայնիւ չը կարողացան համաձայնվել: Կատաւորներից տասը անմեղ յայտնեցին մեղադրվածներին, իսկ 2 միայն մեղաւոր: Իրանից յետոյ դատարանը ազատ յայտնեց թէ դատաւորներին և թէ մեղադրվածներին:

Իրագրիների մէջ անդադար լուրեր են տարվում որ իշխան Բիսմարկ կամենում է ղեկավարել այն բանակցութիւնները, որոնց օգնութեամբ կարելի լինի խաղաղ ծանապարհով լուծել յոյն-թիւրքական վեճը: Այդ բանակցութիւնները չափազանց դանդաղ կերպով են ընթանում, այնպէս որ երկու հակառակ կողմերը Թիւրքիան և Զուլաստանը միջոց ունեն տեսնել իրանց պատրաստութիւնները:

չափ տարբերութիւն այն օրէն ի վեր. կը տեսնենք այսօր վեհօրի երկրորդական, որ ի պատասխան և յետագա ազգային փրկութեան մեծ գործին կը աքնդին. այդ երկրորդականներում մէջ 20 տարին մոտոյ չը կայ: Զարմանալի գուցադրվածութիւն մը. այս միջոցին ի մի հաւաքուցան Կ. Պօլսի այն երկրորդականները, որք զանազան ծանապարհներով մի և նոյն նպատակին կը նկատին և չը պիտի մոռնանք այդ ժամերը որ ամենք միասին տեսանք— Կաթի Կ. Պօլսի հասաւ Կ. Նորատունկեան, Կարսոյ նահանգը ուսումնասիրած, Ռուսական հայերը այցելած իրաց արդի վիճակին վրայ ստոյգ տեղեկութիւններով մի էր. Միացեալ ընկերութիւնը անմիջապէս գինքն իրենց նախագահ ընտրեցին. մեծ յոյս ունինք որ Նորատունկեան նոր գարն մը պիտի ապ ընկերութեանց յառաջադիմութեանը: Քիչ վերջը հասաւ Կ. Վասիլեան. երկրորդ անգամն էր որ այդ երկրորդականը կը պանդխտէր ի Տէրսիւթ «Մշակ» հրուսէր կարդացած էր լքմիմանի հաւատոյ լուրը տարածել այդ լուսնորս— հայ— քիւրդ ժողովրդից մէջ. լքմիմանի խուլ մնացած էր, որովհետեւ գուցէ մոռնէր թէ Հայաստան չը կայ, այլ սուրբ Աթու կայ:— Պարտիարքի քաջակերութեամբը: Արարատեանը ձեռնարկեց այդ ապերախ աշխատութեանը. Պ. Վասիլեան, Կ. Պօլսեցի, Երուսա կրթութեան, ամեն հանգստութեան մէջ հոտ, բայց կը մեկնի ի Տէրսիւթ առանց ու և է փոխարինութեան. հոն ապաւ ժողովը դեան մը մէջ կրթութեան կը սկսի ծաւալել: Զարմանալի և Գրիկ մէջ կը կառուցանէ ժողովրդեան աշխատանքը վարձարաններ, կը կարգէ դատաւորներ և 400-ի շափ աշակերտներ կը սկսին կրթուիլ. թիւրքերը և քիւրդերը կը դարձնան, կը կարծեն թէ հայք բերդեր կը կառուցանեն և ուսման ինքզինքներն սանձել: Այս ամեն վերստին կերթայ հոն, Զմիկածագի մէջ մեծ վարձարան մը, Գրիկ մէջ մի աղջկանց և մի մանկերու վարձարաններ կը շինուին, որով ընդամենը հինգ

Թիւրքիան շարունակում է պատրաստվել պատերազմի համար և հաւատացած է, որ ինքը կը յաղթի, հետեւապէս որ իրաւունքը յաղթողի կողմը կը լինի: Միւս կողմից յունական կառավարութիւնը աշխատում է որոշել, թէ ինչպէս կը վերաբերվի Եւրոպան դէպի իր վարմունքը, եթէ նա չընդունի Բ. Գրան առաջարկած դիմումները և այդ պատճառով պատերազմ սկսվի: Եթէ յունական կառավարութիւնը համազօրի, որ Անգլիան նրան կը պաշտպանէ գոնէ բարոյապէս, այնուհետեւ նա կարող է առաջինը պատերազմ սկսել:

ԱՆԳՆԻՍ

Լօնդոնից, յոնվարի 15-ից լրագրիներին հետագրում են հետեւեալը:

Անգլիական արտաքին գործերի մինիստրի օգնական Զարլզ Գիլի, պատասխանելով պարլամենտի անդամներից մէկի հարցին, ասաց, որ պետութիւնները դեռ ոչինչ չեն վճռել Բերլինի դաշնագրի 23-դ յօդուածը իրագործելու համար, որ վերաբերում է Թիւրքիայի եւրոպական նահանգների մէջ օրգանական կանոնադրութեան մոցնելուն: Կառավարութիւնը այդ բանը ի նկատի ունի և միւս պետութիւնների հետ համաձայնելով կաշխատի իրագործել այդ յօդուածը: Բացի այդ մինիստրը յայտնեց, որ Բ. Գուռն ցանկանում է, որ դեսպանները մի կօնֆերանցիա կազմեն Կ. Պօլսի մէջ: Անգլիական կառավարութիւնը բանակցում է միւս պետութիւնների հետ Թիւրքիայի այդ առաջարկութեանը մի պատասխան տալու մասին:

Համայնքների ժողովը քննում է օրինագիծը իրանդացիների անձնականութիւնը և կայքի ապահովութիւն պահպանելու մասին:

Գուրբանից «Իշթերի» ընկերութեանը հաղորդում են, որ Պրետորիէի մօտ եղած անգլիական զօրաբաժինը յարձակվեցաւ

վարժարան կը կառուցանէ ժողովուրդը. երբ դուրս մը կուենայ Բնչեր կընէ ժողովուրդը, 1000-էն աւելի հայեր կը կրթվին: Անցեալ օր Կ. Պօլսոյ Ա. Ե. Ե. տաքեր թերթը (բողոքական հայոց օրգան) խարբերեցին ամերիկացի միսիոնարի մը նամակը կը հրատարակէր, յորում օտարազգին զարմանօք կը խօսէր Կ. Վասիլեանի վրայ և կընէր թէ «նրա գործերը քիչերն կալուց են ընել»— Ամերիկացի քարոզիչը երբ Գիլի կերթայ վարժարան հիմնելու, հոն կը տեսնէ Արարատեան դպրոցը. հանկարելի է կընէ բողոքական ժողովուրդին, որ մենք այսպիսի բաներ ընենք. ձեր դուռակները պոյ վարժարանը խրկեցէք: Ի՞նչ փոփոխութիւն ժամանակի. Ամերիկացի մասնաւորապէս քարոզութեան եկող բողոքականները հրաւէր կարդան իրենց հօտին որ դուռակին լուսաւորչականաց վարժարանը կրթեն. մըթթը Հոյլըրի Արարատեանի տեղեկագիրը դրական գրած ամեն կողմ ցուց կուտայ եղեր թէ, տեսէք Կ. Պօլսոյ հայերն ինչպէս կաշխատան: Մարթըր Հոյլըրի իրաւունք ունի զարմանալու. երկու տարի առաջ երբ Կ. Պրթիւզգալեան կերթար Արարատեան վարժապետանոցը բնաւ ի վան, մեղամաղձիկ կերպով կը գրէր թէ ի ճանապարհին ընկեր ունէր ամերիկացի քարոզիչներ, որք 15,000 ոսկւոյ գրքեր կը տանէին միասին վարժարաններ հիմնելու. ինքն Կ. Պրթիւզգալեան 150 ոսկի իսկ չուէր. մենք այն օրերը եռանդով ու յոյսերով լի էինք և ուսման էինք ամեն դժուարութեանց յաղթել: Կրք Կ. Վասիլեան միայն 30 ոսկի ծախելով առաջին անգամ կերթայ և կը գերազանց ամերիկացիներն, աշխատելով տեղական ոյժերով, անշուշտ կը միմիկարուինք և գոհ կըլլան մեր ուսումնասնիցի կողմէրը. որ այնքան հաւատքով մեր տկար քայլերուն օգնեցին: Պ. Վասիլեանի քիչ վերջը հասաւ հոս Կ. Պրթիւզգալեան. ձմրան այս դարձուրելի եղանակի մէջ կըլլէ Վասպուրականին գալ Կ. Պօլսի, և վերադառ-

բոլորներն ամրացած դիրքի վրա և յաղթեց բոլորներին երկար պատերազմից յետոյ։ Նրբու կողմից էլ բաւական շատ սպանւածներ և վիրաւորվածներ կան։

«Times» լրագիրը, որ արտայայտում է Անգլիայի հասարակական կարծիքը, նկատում է հետեւեալը։ Քանի որ թիւրքիայի ֆոնաստանի յարաբերութիւնները կատարելապէս ընդհատված չեն, Անգլիան նրանց բարեկամական ծառայութիւններ կանի։ Ֆոնաստանը կարող է յուսալ Անգլիայի գիւղամատիական օգնութեան և միջնորդութեան վրա։ Ով որ կը սկսի պատերազմ, հեռանքների համար պատասխանատու կը լինի։ Եթէ ֆոնաստանը պատերազմ սկսի, նա չը պէտք է գանգատվի, որ պետութիւնները նրան օգնութիւն չը հասցնին։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

—Կ. Պօլսի «Մասիս» լրագիրը հաղորդում է, որ ռուսական չափազանց զինուորի կողմից քուրդ ցեղից յիսուն ընտանիք, էյուր փաշայի առաջնորդութեամբ անցել են դէպի թիւրքաց չափազանց Մանսիկերտ գաւառը և այնտեղ ասպատակութիւններ են անում։

—Նոյն լրագիր մէջ կարդում ենք, որ Կ. Պօլսի գանալան լաւաւաններում սկսել են դատախազութիւններ կարգաւ յօդուալ բարեգործական նպատակներ, և մեր հասարակութեանը ծանօթ զօրօր Բ. Շիշմանեան էֆենդին կարդում է իր կատարած Հայաստանի ճանապարհորդութեան մասին, և մեծ համակրութեամբ ընդունվում են յարգելի պարոնի դատախազութիւնները։

—Նոյն լրագիր մէջ կարդում ենք, որ Աթէնքի մէջ կազմվում է մի ընդարձակ ընկերութիւն «Հ և Լ Ե ն ա կ ա ն մ ի ու թ ի լ ւ ն» անունով, որի նպատակը պէտք է լինի նպատակ թեսալիայի և Նպիւրոսի գաւառների ֆոնաստանի հետ միացնելուն։ Ընկերութիւնը պէտք է ունենայ իր իշխանութեան սակ մեծ գումարներ։

—Կ. Պօլսի «Վալիք» լրագիրը կէս պաշտօնապէս հաղորդում է, չորսօրեան տոնակներին օդնութիւն բաշխելու գործը կառավարութեան գործ է (?), այս պատճառով Բ. Գուրը Հայաստանի սովակների համար պատրաստարարներ։

Նախ արդէն ինքնին պերճալիս էր. անոնք որ քիչ մը խելք ունեն, այդ ճանապարհորդութեան մեծ կարեւորութիւնը կըմտնեն։ Փորթուգալեան վասպուրականի վիճակը ծանօթացուց Կ. Պօլսի հայոց. այդ համետ երկրասարդը Կ. Պօլսի նոր սերունդի պարագլուխը կրնայ համարվիլ։ Երբ կը մտածենք թէ թողած կին ու գաւառ, տուն ու հանգիստ, շահ և վաստակ և կաշխատի կամ համարակրի հայ ժողովրդի կրթութեան համար, կը սկսենք մտածել թէ մենք ինչ կընենք։ Պ. Փորթուգալեան անշահախնդրութեան, զոհողութեան, հայրենասիրութեան և խելքով գործելու կրնանի օրինակ մ'է հայ երկրասարդութեան. երբ այս տողերը կը գրենք, նա արդէն Տիգրիս է։

Պ. Փորթուգալեանի համեմէն ոչ շատ ուշ հասաւ ձեր հայրենակիցը պ. Նիկողոսեան. իբր գիտութիւն և զրախան անձ նա արդէն համբաւ ստացած էր Կ. Պօլսի. թերթերէն ունայնորդալը կանխաւ ծանուցին։ Գունվար 1-ին թէպէտ տուն էր, բայց պ. Նիկողոսեանը ընդունելու համար պատրաստուողները եղան։ Մեզ անկ չէ բակ թէ նա ինչ սիրավոր ընդունելութիւն պարտաւոր ենք ընել ձեր հայրենակցին։ Քանի որ հոս է, լաւ տաւարութիւն ըրաւ մեր վրայ, թէպէտ զինքը քիչ մը անապաւ կը գտնուի, և խիտ կեդրով կը դառնէ զմեզ, բայց նոր սերունդը որ կարճամասքէ կեդրէն ու խարդաւանները, կը սիրէ անկեղծ ու ճշմարտաւոր ողբերգ։ Պ. Նիկողոսեանը ի մօտոյ կը տեղեկացնէ մեզ Ռուսաստանի հայոց կարծիքները, վիճակը և անձերը, և աստի Ռուսական մասկոյ միջնոցաւ պիտի կրնայ նպատակը ազգային դատին։

Պ. Նիկողոսեանէ քանի մ' օր ստալ հասած էր Պ. Չերալ, որ 8 ամսէ ի վեր Լոնդոնայ էր, ազգային արտաքին քաղաքական խնդրոց մէջ. Պատրիարքի ալ բազուկը նկատուած է և իւր խոհանրութեամբ ու ճարտարութեամբը Հա-

միջնորդութեամբ եղած հանգանակութեան գործը ուղարկութեան առած է, և որոշել է ստուգել, թէ որչափ գումար հաւաքվիլ է և ինչ եղանակով բաժանվիլ է։ Բ. Գուրը, որպէս երեսու է, շուտով հայոց եկեղեցիների գանձանակադրամն էլ թիւրքաց կ ա ու վ ա թ ու թ է ա ն գ ո Ր ը պիտի համարէ...

—«Մասիս» լրագիրը հաղորդում է. երկու յոյն վաճառականներ 510 հազար ֆրանկ նուիրել են ֆոնաստանի կառավարութեանը իր աշխատանքները անվճար։

—Կ. Պօլսի «Մասիս» լրագիրը հաղորդում է, Պլեյնայի հերոս Ղազի Օսման փաշան պատերազմական միջնորդ նշանակված է։

—Կ. Պօլսի «Մասիս» լրագիրը մէջ կարդում ենք. Վանի գիւղերից մէկի մերկ սովակներին բարերար ազգայինների կողմից հազուադէպ հարձակվելով այդ գիւղի վրա, հազուադէպ կողոպտում են, թշուառներին դարձնալ մերկ թողնելով ձուլվայ սաստիկ ցրտերի ժամանակ։

—«Մասիս» լրագիր մէջ կարդում ենք. «Վանից խիզախ» Ուսումնասիրաց ընկերութեանը եկած մի հեռագիր ծանուցանում է, թէ երեք նշանաւոր քրդեր, Վանից մէկ օրվայ ճանապարհով հեռու, Նիկիտ գիւղի մէջ գտնված իշխալ ընկերութեան դպրոցի վրա հարձակվելով, վարժապետներին ծեծել են և դպրոցը փակել են։

Խ Ա Ռ Ն Լ ՈՒՐԵՐ

Լրագիրները հաղորդում են մի քանի հետաքրքիր տեղեկութիւններ ֆրանսիական երեկի դերասանուհու Սարա Բերնարի Ամերիկայում տուած մի քանի ներկայացումների մասին։ Նիւ-Եորկում նա տուած է եղել 24 ներկայացում։ Երեք անգամ կատարել է «Ալբերտ-Լիւկսմբուրգ» դերը, որից ստացվել է 68,000 ֆրանկ, փեց անգամ «La dame aux Camélias» ունեցել է 127,000 ֆր. մուտք, չորս անգամ ներկայացրել է Վերանի, որից ստացվել է 81,000 ֆր., երկու անգամ «Ֆելդ» ներկայացնելուց ստացվել է 304,000 ֆր. և երեք անգամ «Սֆինկս» տուել է մուտք 50,000 ֆր.։ Միջին թուով Սարա Բերնարի ներկայացումներից ստացվել են ամեն անգամ 19,000 ֆր.։

Պաշտօնական տեղեկութիւններից տեսնում

յատանի բարեկարգմանը համար մեծապէս օգտակար կըլլայ ազգին։ Նրկու տարի առաջ երբ հայկական պատգամաւորութիւն մը Լեւոնայ գնաց, յայտնի տեսնուեցաւ թէ որչափ անձանթ ենք անոնց։ Պ. Չերալի այս անգամից այցելութեան կերել թէ մեծ յառաջդիմութիւն եղած չէ այս մասին։ Իրաւ է որ հայ և Հայաստան բառերը բաւական ընդհանրացած են, բայց քիչ երբ մեր վրա պէտք եղած տեղեկութիւնները ունին։ Լաւ կերպով տարածում ընելու համար պ. Չերալ իր աշխատութիւնները երեք մասի բաժնած է. 1-ին, մասնը ընտանեկան ջրկանակներու մէջ և հայերն ճանաչցնել անոնց իրենց ախտաբան ոճովը։ 2-ր յարաբերութիւններ հաստատել հասարակական անձանց հետ և ջանալ անոնց ուղղութիւն տալ հայկական խնդրոց մէջ։ 3-ր բանակցել նախարարաց հետ Հայաստանի լարիկարութեանը մասին։

Ընտանեկան ջրկանակներու մէջ շատ երկուցթիւն և հացիկերովներն այս խնդիրներով կը դըրաւ և կը նկարագրէ Հայաստանի աղէտները, կը ծանօթացնէ մեր անցեալը և ներկայիս ու այն մեծ դերերը, զոր հայք կը կատարեն ուրիշ աշխարհներու մէջ։ Նրբեմն գէպը իրեն օգնութեան կը հաճի։ Մի գիւղեր մեծ երկուցթիւն մը մէջ իրանդայի հարցին վրայ է խոստացութիւնը, մտքերը յուզվել են, ամենքը միջոցներ, դարմաններ կը մտածեն և կտաւաճարեն, այն պատճառով Սիւրբէր, Անգլիոյ մեծ պատմաբաններէն մին կուզայ դէպի տիկին Նովիթով (օրիորդ Օլիա Նովիթով) տիկին, կըսէ, մեզ ալ տուէր Լոնդոն-Մէլբուրք մը որ փրկուիք։

Այն հասարակական անձներ, որոց մտքերը մը չափել հաբի էր, խորապատկաններն էին, երեսփոխաններն և բարձրագույն պաշտօնական անձներ, որոց մէջ Հայաստան պաշտօն փարպիները գլուխուած են։ Հայկական դատի երկաւարը փառաբանը այս մասին ալ յաջողութիւն գտաւ. լրագիրներու մէջ զլուստորապէս 8 է յ Լ Ե Ն ի ու զ

ենք, որ Ֆրանսիայից աքսորվեցան 7,014 արեւմտեան, նրանց թուում կան.—2464 եղուիաներ, 406 կապուցիներ, 1,450 արապիսներ և 409 ֆրանցիսկաններ։

Լոնդոնում գիտաւորութիւն կայ մի նոր միջազգային բժշկական և առողջապահական հանդէս բաց անել միջազգային բժշկական կոնգրէսի նիւստերի ամբողջ ընթացքի ժամանակ։ Այդ աշխարհահայտի հարկաւոր գումարը արդէն ժողոված է։

Փարիզում մի քանի ժամանակ է տատիկ ցըրտեր են անում այնքան ձիւն է եկել, որ փողոցներում զգուշացնում են անցնում կառքերով, իսկ մի քանի փողոցներում երթեկներին բոլորովին չը կայ։ Բուլոնեան անտառում սահնակներով են զբոսնում և առհասարակ ամբողջ հիւսիսային Ֆրանսիայում չեղած ցրտեր են անում։ Նոյնպէս էլ Լոնդոնում մեծ ձիւններ են գալիս. փողոցները կատարելապէս դատարկ են անցուղադնողներից, կառքերի ու օմնիքուսների երթեկներով խափանված է, միայն ստոր-երկրայի երկաթուղիներով կարողանում է ժողովուրդը յարաբերութիւն ունենալ քաղաքի մասերի հետ, թէպէտ ձիւնը այնտեղ էլ է թափվել։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յունվարի։ Այսօր նախագահական դատարանը քննեց Կաշեւ վարովա-Բուլոնի գանգատը «НОВОЕ ВРЕМЯ» լրագրի խմբագիր Ֆէօդորովի, նրա աշխատակից Բուրենինի, «Սամոխիւթովա-Սամոխիւթովա» վէպի հեղինակ Պոլիկարպովի և «Петербургская Газета» լրագրի աշխատակից Բատայինի վրա։ Դատարանը վճռեց. Պոլիկարպովին բանտարկել հաւաքովախտի մէջ երեք ամսով, Ֆէօդորովին, Բուրենինին և Բատայինին բանտարկել երեք ամսով և բացի այդ տուգանք աւելն' Ֆէօդորովից 400 ռ., Բատայինից 100 ռ.։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 յունվարի։ Կովկասի թէյի պլանտացիաների մասին նոյնպէս և ասեւրական հարցերի մասին եա-

պօնական ղեսպանատանը ոչինչ որոշ յայտարարեցին չէ։ Եւրոպայի չէ բանակցել մեր արտաքին գործերի միջնորդի հետ այդ առարկայի վերաբերութեամբ և իր կառավարութեանը ոչինչ հրահանգներ չէ ըստացել։ Լրագիրների հաղորդած լուրերը այդ հարցի մասին անհիմն են։ Նրէկ թագաւոր Կայսրը զօրաւոր ժամանակ առաջ կանչեց Լովկասեան փոխարքայ Մեծ իշխան Միխայիլ Նիկոլայեւիչին և հրամայեց զօրերին նրան գինեւորական պատիւ տալ։ Զօրքերը ուր կանչեցին։

Կ. ՊՈԼԻՍ, 26 յունվարի։ Հայդարէֆեան դի Բ. Գրան առանձին հաւատարմատարի հետ ուղեւորվեցաւ պարսկական սահմանները թիւրք-պարսկական տարակուսանքները լուծելու համար։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յունվարի։ Պետական բանկի 5% տոմսով առաջին շրջանի արժէ 95 ռ. 37 կ., երկրորդ 93 ռ. 25 կ., երրորդ 93 ռ. 50 կ., չորրորդ 93 ռ. 5 կ., ներքին 5% տոմսի փոխառութեան տոմսակը արժէ 222 ռ., երկրորդ 212 ռ. 55 կ., արեւելեան տոմսի փոխառութեան տոմսակը արժէ 91 ռ. 81 կ., երկրորդ 92 ռ., երրորդ 92 ռ., սակի 7 ռ. 82 կ.։ Ռուսաց 1 ռ. Լոնդոնի վրա արժէ 25,19 պէնս, Ամստերդամի վրա 127,37 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա 214 3/4 մարկ, Փարիզի վրա 266 ֆրանկ։ Բօրայի արաւմալութիւնը հանգիստ է։

ՍԵՓԱԿԱՆ ԹՊԱԿՑԻՑ

ՂՈՒԲԱ, 27 յունվարի։ Քաղաքի մէջ տարածված են կարմրակ և բժաւոր տիֆ հիւանդութիւնները, որոնք շատ զօհեր են տանում, գլխաւորապէս երեխաներից։ Չափազանց զգալի են բժշկների բացակայութիւնը և առողջապահական միջոցների դրժադրելու պակասութիւնը։

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԻՈՐ ԱՐԹՐՈՒՆԻ

Արդեօք Թրոթմըր և իր նմանները մարդասիրական զգացմամբ թրքաւոր են։

Հասարակաց կարծիքը ի նպատակ մեզ պատրաստելու համար ինչ որ երկրասարդ մը միայնակ և առանց զրամական միջոցներու կարելի էր ընել, պ. Չերալ ըրաւ, և գիտենք թէ ինչ անձնական մեծ զոհողութիւններով, Հարկ է որ մըշտակայ պատուիրակ մը ունենանք ի Լոնդոն որ շարունակէ պ. Չերալի աշխատութիւնները։

Նախարարաց հետ բանակցութիւններն ինդրոյն կարեւորագոյն մասը կը կազմէին և հոս ալ գոհանալու տեղի ունինք։ Իւրաքանչիւր նախարարի հետ պ. Չերալ առանձին տեսակցութիւններ ունեցաւ. ամեն նախարարը խոստացած է պաշտօնէից ժողովոյ մէջ իրենց աշակցութիւնը նուիրել ի նպատակ հայոց, և ունանք յայտարարած են թէ ոչ շատ ուշ իրենց հայաստանի յօւթ է ա ն շ օ շ ա փ Ե Լ Ի ա պ ա զ ո յ ց Ի Ե ր ք ա ի տ ա ն ի խիտ երկուցթիւն այս տեսակցութիւնը մանրամասնօրէն նկարագրել, թէպէտ և հետաքրքրական են, միայն համառօտ գաղափար մը տանք Վլադստոնի հետ եղած խոսակցութեան. նախ սա ըսենք թէ պ. Չերալ Լօրտ Կրանվիլէն տեղեկութիւններ խնդրած է Հայաստան անունը Գիւրգիստանի փոխուելուն և թէ այժմ այս անախորժ բառը վերցուի։ Լօրտ Կրանվիլ կը պատասխանէ թէ իրենք Հայաստանը Հայաստան կը ճանաչեն, սակայն քաղաքական յարաբերութեանց մէջ քանի որ օրէնք է հիւպատոսները նշանակել նոյն տէրութեան ճանաչած անունով եղած դատաւին մէջ, Անգլիոյ կառավարութիւնը կարող չէր թիւրքիայի գաւառներուն համար Գրան որոշած պաշտօնական անունները փոխել հիւպատոսի ընտրութեանց միջոցին։

Ժամանակը ուշ է, կը մնայ յաջորդ նամակի պ. Վլադստոնի տեսակցութիւնը։

Մի և նոյն տեղը ԽԻՆԱՅԻ
ԻԻՂ, մազեբը ամբացնելու հա-
մար, 1 ր. ումանը զրձին զլսա-
ցաւի դէմ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱ-
ՊՈՆ և հոռաւէտ ջրեր և այլն:

11—100

Типографія Главн Управ. Намѣстн. Кавказск.